ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Մաքսային մարմնի արական սեռի հանրային ծառայողի մուգ կապույտ գույնի երկարաթև վերնաշապիկ Գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի, գնդապետի՝ 70 հատ Մաքսային ծառայության գեներալ-լեյտենանտի, գեներալ-մայորի և գնդապետի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների մուգ կապույտ գույնի երկարաթև վերնաշապիկը (Նկար 22) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է: Ձևվածքն ուղիղ ուրվագծով: Առաջամասում կոճկվում է 7-10 մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակներով (ըստ չափ/հասակի): Օձիքը՝ հետ ծալվող, առաջամասում՝ 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ երկկողմանի կպչուն ժապավեն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն ամրացնելու համար: Կրծքամասի ձախ հատվածում՝ 14 սմ լայնությամբ և 15 սմ երկարությամբ վրադիր գրպան՝ շերտակարով, վրան՝ կրծքի տարբերանշան (Նկար 85): Հետնամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ երկար, երկուական մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող հետ ծալվող թեզանիքներով: Ձախ թևի վրա, ուսակարից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի՝ եզրագծված իրար զուգահեռ ոսկեգույն զարդանախշով (Նկար 86): Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Վերնաշապիկի կտորը՝ 33 տոկոս վիսկոզի և 67 տոկոս Պ/Է , խառնուրդ՝ 175 գր/քմ ±5% խտությամբ. Փոխգնդապետի, մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի՝ 1970 հատ Մաքսային ծառայության փոխգնդապետի,

մայորի, կապիտանի, ավագ լեյտենանտի, լեյտենանտի և կրտսեր լեյտենանտի կոչումներ ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողների մուգ կապույտ գույնի երկարաթև վերնաշապիկը (Նկար 23) մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) կտորից է: Ձևվածքն ուղիղ ուրվագծով: Առաջամասում կոճկվում է 7-10 մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակներով (ըստ չափ/հասակի): Օձիքը՝ հետ ծալվող, առաջամասում՝ 4 սմ լայնությամբ և 7 սմ երկարությամբ երկկողմանի կպչուն ժապավեն՝ Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության համապատասխան հատուկ կոչումն արտացոլող լամբակներն ամրացնելու համար: Կրծքամասի ձախ հատվածում՝ 14 սմ լայնությամբ և 15 սմ երկարությամբ վրադիր գրպան՝ շերտակարով, վրան՝ կրծքի տարբերանշան (Նկար 85): Հետնամասը՝ վերին կտրվածքով, թևքերը՝ երկար, երկուական մուգ կապույտ (գունային կոդը՝ #19-3921TPG) պլաստմասսայե կոճակով կոճկվող հետ ծալվող թեզանիքներով: Ձախ թևի վրա, ուսակարից 9 սմ ներքև՝ թևքանշան (Նկար 84): Դաստակի հատվածում կողակարից դուրս եկող 5 սմ լայնությամբ, սուրանկյուն եզրով ավարտվող, 14 մմ տրամագծով ոսկեգույն մետաղյա գլխիկավոր կոճակով (Նկար 83) կոճկվող ներկարված գոտի: Օձիքի միացման կարի տակ՝ պիտակ (Նկար 87): Վերնաշապիկի կտորը՝ 33 տոկոս վիսկոզի և 67 տոկոս Պ/Է խառնուրդ՝ 175 գր/քմ ±5% խտությամբ: ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ ** Մատակարարված ապրանքը պետք է լինի նոր, չօգտագործված: Ապրանքի տեղափոխումը և բեռնաթափումը իրականացնում է Մատակարարը իր միջոցներով և իր հաշվին: *** Յուրաքանչյուր համազգեստի վրա պետք է լինի համապատասխան պիտակ, որի վրա պետք է նշված լինի կտորի կամ գործվածքի բաղադրությունը (տոկոսային հարաբերակցությամբ) և ապրանքի խնամքի առանձնահատկությունները (պատկերների կամ մակագրությունների տեսքով): **** 1-ից - 4-րդ, 6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված յուրաքանչյուր ապրանք պետք է ունենա առանձին փաթեթավորում, որի վրա պետք է նշված լինի անվանումը, չափսը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: ***** 5-րդ և 12-րդ չափաբաժինները՝ կոշիկների յուրաքանչյուր զույգը պետք է լինի առանձին ստվարաթղթե տուփով, որի վրա պետք է նշված լինի անվանումը, արտադրողի անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը, չափսը: ****** Յուրաքանչյուր համազգեստի այն տեսակը, որի վրա առկա է կոճակ պետք է ունենա միևնույն կոճակից մեկական պահեստային օրինակ, որը պետք է ներսի կողմից պիտակով ամրացած լինի տվյալ համազգեստին: ******* Յուրաքանչյուր ապրանք, ըստ սեռերի, չափսերի և/կամ կոչումների, պետք է լինի առանձին պոլիէթիլենային փաթեթավորմամբ: ******** 1-ից – 4-րդ ,6-ից – 11-րդ չափաբաժիններով նախատեսված չափաբաժինների համար Մատակարարը պետք է իր միջոցների հաշվին ներկայացնի Հայաստանի Հանրապետությունում արտոնագրված, հավաստագրված կամ անհրաժեշտության դեպքում էտալոնային փորձագիտական լաբորատորիայի կողմից տրված երեսացուի գործվածքի բաղադրության, ներկի կայունության, մակերեսային խտության և աստառի բաղադրության վերաբերյալ

	եզրակացություն: ********* Մատակարարը ապրանքի մատակարարումից առաջ պետք է համաձայնեցման ներկայացնի յուրաքանչյուր ապրանքատեսակից մեկ օրինակ որպես նմուշ՝ արտաքին տեսքը համաձայնեցնելու նպատակով: Հաստատված նմուշը հանդիսանում է պայմանագրով սահմանված քանակի մաս: Նմուշի հետ համատեղ՝ մատակարարը պարտավոր է ներկայացնել արտադրման համար օգտագործված բոլոր նյութերի նմուշները՝ ամրացված Ա4 չափի գծագրական թղթի (ստվարաթղթի) վրա: Ներկայացված նմուշները ստորագրում է Մատակարարը, որոնք հաստատվում կամ մերժվում են մասնագիտական խմբի կողմից՝ ներկայացնելուց ոչ ուշ քան երկու աշխատանքային օրվա ընթացքում: ********** Մաքսային մարմնի հանրային ծառայողների կոչումների քանակը, համազգեստի և բաղկացուցիչ պարագաների չափսերը, լրացուցիչ կտրամադրվեն պատվիրատուի կողմից՝ պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը, Մատակարարի էլ.փոստին ծանուցում ուղարկելու միջոցով: ********** Մանրամասների համար օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի նոյեմբերի 17-ի «Մաքսային մարմնի հանրային ծառայողի համազգեստի ձևը սահմանելու մասին» N 1980-Ա որոշման դրույթներից, որում ներառված են յուրաքանչյուր չափաբաժնի տեխնիկական բնութագրում համապատասխան համարնով նշված նկարները, ինչպես նաև համազգեստի բաղկացուցիչ մաս կազմող մաքսային մարմնի հանրային ծառայողի տարբերանշանների տեխնիկական բնութագրերը:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

«Гарун кари фабрика» ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/10 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	